

լածնութեան հիմքը պիտ կազմէր—և մենք զարհուրած կնկատենք, թէ ինչպէս արդարեւ ի խաւարի են տակաւինս ինչպէս սիւսլ և վնասկար ենք գործ դրել այն ըստ ինքեան շահաբեր լոյսը, որ քաղաքակրթութիւնը մեր կեանքի վերայ սփռել է:

Բնական, ինքնաբերական, ճշմարիտ լոյսը իւր ջերմութիւնը հետը պիտ ունենայ. այն լոյսը, որ սիրոյ ջերմութիւնից զուրկ է, որ մարդոց սրտերը չէ հալում, իրար հետ կապում, սրբոյն, ազնուին բարւոյն համար զգայուն դարձնում՝ կեղծ է, ասում է առաքեալը՝ մուրացածոյ և արուեստական: Ճշմարիտ լոյսը միայն արտաքին անոտի փայլով մարդոց աչքերը չէ շլացնում, այլ ճառագայթում է նոցա հոգու մէջ. կրթում, ազնուացնում է նոցա սիրտը: Եթէ արդարեւ նոր տարին մի նոր կեանքի ծանապարհ պիտի բանայ մեզ համար, ապա մեր ծանապարհը այսպիսի լուսոյ լապտերով պէտք է լուսաւորուած լինի. եթէ մեր հոգեւոր բարոյական կեանքը կաշկանդող անբերրի անապատ դարձնող սառնամանիքը զուարթերես դարնան տեղի պիտի տան՝ ապա ընդհանուր եղբայրական սիրոյ ջերմ՝ ճառագայթները պէտք է նորա վերայ ընկնեն, մինչև կուրծքերի խորքը թափանցեն:

Չմեռն է դեռ և խաւար, բայց հեռու հորիզոնի վերայ կանգնած՝ ջերմ լոյս է սփռում ամեն հաւատացեալի սրտի մէջ Բեթղեհէմի աւետարեւր աստղը և թելադրում՝ երգել երկնքի հրեշտակների հետ մէկ տեղ. «Փառք ի բարձունս Աստուծոյ և յերկիր խաղաղութիւն, ի մարդիկ հաճութիւն»:

Կ. Ա.



ԽԾՂՆԷԻՅ ԱՂԱՆԻՐ *



Պանդաւոր կամ հերետիկոս անունը նախնական ժամանակներէց ի վեր եկեղեցին տալիս է այն մարդոց, որոնք իրենց քրիստոնեայ են անուանում, բայց առաքեալների աւանդած ճշմարիտ հաւատքից շեղուելով՝ ինքնահնար մոլորութիւնների են հետևում:

Բնական է որ այդպիսի մոլորութիւններ նոյն իսկ քրիստոնէութեան առաջին քարոզութեան միջոցին մուտ գործէին եկեղեցւոյ մէջ: Թէ հրէաները և թէ հեթանոսները քրիստոնէութիւն ընդունելով՝ բերին իրենց հետ նախկին հայեացքները և սովորութիւնները, որոնք մասամբ միայն աւետարանին յարմարուել և նորա ստեղծագործող ազդեցութեան ներքոյ կերպարանափոխ լինել կարող էին. մնացորդից՝ զանազան խառնուրդներ գոյացան, որոնք քրիստոնէութեան անուն կրելով՝ ձգտում էին իսկական քրիստոնէութեան տեղ անցնել և Ս. Աւետարանը օտար նպատակների ծառայեցնել: Առաջին քրիստոնեաները հրէաներ էին և առաջին մեծ արդէւքը, որին աւետարանը պիտի յաղթէր՝ փարիսեցիական օրինապահութիւնն եղաւ: Արտաքին կարգերի, մանրակրկիտ ձևակերպութեանց սովորած մարդիկ հեշտութեամբ չէին կարող հաշտուել աւետարանի ազատ ոգու հետ, կամենում էին այդ ազատ վարդապետութիւնը օրէնքի նեղ սահմանների մէջ փակել և շարունակելով

* Ժամ. Լրագրութեան մէջ արդէն մի քանի անգամ խօսք է եղել իմ գերմաներէն լեզուով նրատարակած «Պողիկեանք Բիւզանդական կայսերութեան մէջ և ազգակից աղանդատող երեւոյթներ հայաստանում» գրութեան մասին: Շատերն ինձ առաջարկել են այդ գրքի հայերէն թարգմանութիւնը լոյս ընծայել, բայց ամբողջական թարգմանութիւնը մեր հասարակութեան համար աննպատակ գտնելով և նորանոր ուսումնասիրութիւններով ծոխացած աւելի նպատակայարմար աշխատութիւն ընծայելու միջոց չունենալով՝ տալիս եմ այստեղ այդ գրութեան մի նմուշ, ըստ մեկն ի հարկէ փոփոխած թուրքովի և ամսագրերիս նպատակին յարմարեցրած: Գուցէ ապագայում կենտեւն նաեւ ուրիշ հատուածներ նոյն գրքից:

խաբութիւն գնել հրէի և հեթանոսի մէջ պահանջումէին, որ հեթանոսն էլ քրիստոնեայ լինելուց առաջ հրէայ լինի, աւետարանի հետ օրէնքի ծանր լուծը վրան առնի:

Պօղոս առաքեալը խորտակեց այդ լուծը և հեթանոսների համար ազատ ծանապարհ բաց արաւ. այնուհետեւ հրէաներից շատ քչերը յօժարեցին այդ ծանապարհով գնալ և ապարկը շուտով հեթանոսներին մնաց:

Սակայն այստեղ ևս շատ չանցած նոր արգելքներ և վտանգներ հանգէս պիտի գային: Աւետարանի պարզ, անուսումն քարոզիչները յունական փիլիսոփայութեամբ կրթուած ծարտասանների հետ զործ ունէին, որոնք իրենց հայրենի կրօնի սնտախապաշտութիւններից ձանձրացած՝ նոր կրօն էին փնտռում: պատրաստ էին ծանաչել և ընդունել աւետարանի բարձր բարոյական սկզբունքները, բայց ձրգտումէին նոցա իրենց քմբի համաձայն բացատրել, իրենց իմաստութեանն ու դիտութեանը յարմարեցնել: Այսպիսով նոքա աւետարանը, որ մինչև այն ժամանակ կենդանի քարոզ էր և մարդոց կեանքի ծանապարհ էր ցոյց տալիս՝ մի նոր ուսումն, մի տեսակ փիլիսոփայութիւն, զանազան իմաստասիրական վէճերի ասպարէզ դարձրին, մինչև որ եկեղեցին ստիպուած եղաւ նոյն դէնքը ձեռք առնել, նոյնպիսի իմաստասիրական միջոցներով ճշմարիտ ուսումն մոլորից որոշել և մերժել իւր միջից այն բոլորին, որոնք իւր տուած կանոնին չէին հնազանդում: Այս տեղի ունեցաւ երկրորդ դարու ընթացքում հեազհետէ, երբ ինքը եկեղեցին որոշ կազմակերպութիւն ստանալով՝ հաստատուն կանոններով իւր արտաքին ու ներքին կեանքը կանոնաւորեց և ստիպեց նոյնն անել և իւր մէջ ծագած աղանդներին: Սոքա էլ սկսեցին այնուհետեւ իրրեւ եկեղեցուց բաժան անկախ մարմիններ գոյութիւն ունենալ և իրենց պահպանութեան ու տարածման համար աշխատել:

Ամենից գործունեան և ամենից տեւականը սոցանից Մարկիոնի աղանդն էր, որ երկրորդ դարու կիսում յառաջ եկաւ և շատ

չանցած ոչ միայն հռովմական աշխարհի մէջ, այլ նաեւ հարեան երկրներում հետեողներ ձեռք բերաւ: Ինչպէս Խորենացին վկայում է՝ Գ. դարի սկզբին այդ աղանդը մուտք էր գործել նաեւ Հայաստանում: այնպէս, որ երբ մի ուրիշ աղանդաւոր՝ Բարդաժան Եղեսացին, այստեղ եկաւ իւր ծանաչած քրիստոնէութիւնը քարոզելու, մաքառել սկսեց նաեւ Մարկիոնեանց դէմ: Եղնիկի * Եղծ Աղանդոց, Գ. դիքըր սոցա դէմ ուղղուած լինելով՝ հաւանական է կացուցանում, որ նոքա Ե. դարում դեռ շարունակումէին իրենց գոյութիւնը Հայաստանում:—Յամենայն դէպս Խորենացու մեզ համար թանգ արժէք ունեցող վկայութիւնը ցոյց է տալիս, որ քրիստոնէական ճշմարտութեան քարոզիչների հետ մէկ տեղ շատ վաղ ժամանակներից արդէն մեր աշխարհում զանազան աղանդաւորներ ևս դեր են խաղացել: Ռժբաղդարար մեր տեղեկութիւնները առհասարակ Հայոց եկեղեցու Ե. դարից առաջ ունեցած վիճակի մասին այնքան մութն են, որ այդ աղանդաւորների գործունէութեան վերայ ենթադրութիւններ անգամ անել չենք կարող: Այսքանը միայն հաւաստի կերպով ասել կարելի է, որ յունական աշխարհում յունական փիլիսոփայութեան և քաղաքակրթեալ կեանքի արտադրած մոլորութիւնները ոչ հետաքրքրական և ոչ հասկանալի կարող էին լինել հայոց՝ պէս մէկ լեռնական, բոլորովին տարբեր կեանքով, տարբեր պայմանների մէջ ապրող ժողովրդի: Այս արեւելեան ժողովուրդի վերայ ազդեցութիւն ունենալու համար աղանդները լուրիշ բնաւորութիւն պէտք է ունենային, նորա սեփական կեանքի ծնունդը պէտք է լինէին: Եւ յիրաւի մենք ունենք վկայութիւնների, որոնք ցոյց են տալիս թէ մեր մէջ սկզբից և եթ աղանդների յառաջ են եկել նոյն կերպով ինչպէս և ընդհանուր եկեղեցւոյ մէջ, բայց տարբեր ոգւով: Ինքը Խորենացին Ս. Մեսրոպի Գողթան զաւառում ունեցած գործունէութեան մասին խօսելով՝

* Տես Գիրք Բ. գլուխ ԿԶ.

ասում է՝ «Եւ որ ի նմա զօղեալ աղանդն հե-
թանոսական թագուցեալ յաւուրցն Տրդա-
տայ մինչև ցայն ժամանակս և ապա յայտ-
նեցաւ ի վատթարել թագաւորութեանն Ար-
շակունեաց՝ զայն երարձ օգնականութեամբ
իշխանի գաւառին որում անուն էր Շա-
րիթ: ... Եւ ոչինչ յայնցանէ պակաս արար-
եալ գտանի և Սիւնեաց աշխարհին օգնակա-
նութեամբ Սորին իշխանին որ կոչէր Վաղի-
նակ: Սորանով այդ հինգ տարի ար-
մատախիլ չէ լինում: Ս. Մեսրոպ ստիպուած
էր տարիներ յետոյ կրկին կռուել նորա դէմ: *
տեղեկանայր ևս եթէ չարեաց վարդապե-
տացն նախագոյնք ի բաղասականն են կողմա-
նը: Որ երթեալ զբազումս յուղղութիւն ածէ
և զսակաւս անգարձս յիշխանութիւն հոնաց
հալածականս առնէ: Շարունակելով այսպէս
նոյն աղանդի հետքերը գտնում է նա Գարգ-
ման գաւառում և Գուգարաց աշխարհում
ևս ու նոյնպիսի յաջողութեամբ յառաջ տա-
նում իւր քարոզութեան գործը:

Հարց է այժմ թէ արդեօք այս աղանդ
ասածը լոկ հեթանոսութեան մնացորդ էր,
թէ ուրիշ աղանդների պէս քրիստոնէութեան
ազդեցութեան ներքոյ յառաջ եկած մի նոր
երևոյթ: Յայտնի հայագէտ Լանգուան այս
հինգ տարիներն նոյնն է համարում ինչ որ են
կրկին Սորենացու պատմութեան մէջ յիշուած
Բորբորիտոնները: ** Բայց այդ ենթադրութիւ-
նը ոչ մի փաստի վերայ չէ հիմնուում: Բոր-
բորիտոն անունը եկեղեցական հայերը (Եպի-
փանիոս, Օգոստինոս) տալիս են Գնոստիկան
աղանդների մի ծիւղին, որ ընդհանրապէս
Բարբելո—Գնոստիկան է կոչուում և Ասո-
րիքում տարածուած է եղել: Սորենացին և
կորին միայն Մեսրոպի նոցա դէմ հանած
հալածանքն են պատմում իսկ նոցա աղանդի
ծագման և բնաւորութեան մասին ոչինչ չեն
յիշում: այնպէս որ այստեղ ևս մենք միջոց
չունենք ստուգելու՝ արդեօք նոքա Ասորիքի

Բորբորիտոնների հետ որ և է կապ ունէին
Գուցէ նոցա ծագումը տարբեր էր և «Բորբո-
րիտոն» կոչուումէին սորբա ինչպէս և միւս-
ները իրենց կեղտոտ վարքի համար միայն: *
Սակայն նոյն իսկ այդ օտար անունը ցոյց է
տալիս որ նոքա հաւանականաբար օտար ծա-
ղումն ունէին: ** Բոլոր աղանդների բունն Ա-
սորիքն է եղել իսկ մեր եկեղեցին ինչպէս
յայտնի է երկար ժամանակ ամենամօտիկ յա-
րաբերութեան մէջ էր Ասորեոց հետ ասորական
դպրոցի մէջ է կրթել իւր պաշտօնեաներից շա-
տերին: Ինչ կասկած, որ նոցա բերած կրթու-
թեան հետ շատ կասկածելի տարբեր ևս կարող
էին մեր մէջ ներս սպրդել: Մինչև Ն. դար ե-
կեղեցին նոցա վերայ ուշադրութիւն դարձնելու
միջոց չունէր. հարկաւոր էր որ նա ներքուստ և
արտաքուստ ամրանար, ունենար իւր սեփական
վարդապետները, զիտնական մարդիկ որպէս
զի սոցա քարոզած ուղիղ վարդապետութեան,
հարազատ սկզբունքների վերայ չափէր և որո-
շէր անհարազատ թիւր ուսմունքներն ու
վարքը:

Յայտնի է Ս. Մեսրոպի և նորա աշակերտ-
ների կատարած մեծ դերը, բայց նոցա պատ-
մական նշանակութիւնը ինչպէս հարկն է բազ-
մակողմանի կերպով ամենևին դեռ չէ պարզ-
ուած: Մոքա միայն զիր ու զբականութիւն
չեն տուել մեզ և Աւարայրի համար հերոս-
ներ դաստիարակել, զուր տեղը չէ որ նոքա
պատմութիւնից թարգմանիչ անունն են ժա-
ռանգել. այդ բառի ներքոյ շատ իմաստ կայ
թագնուած: Արեւելեան մի ժողովուրդի հա-
մար նոքա թարգմանել են արեւմտեան աշխար-
հի ուսման և զիտութեան արդիւնքները, մի-
ջոց տուել հայերին յունական հասկացողու-
թեամբ դաստիարակուելու: Յոյնի մտածողու-
թեան եղանակը իրեն սեփականելու և իրրեւ

* Յունարէն «բորբորոս» բառը տիղմի աղբ է նշանա-
կում:

** Պրոֆեսոր Կարբէշե ցոյց է տուել ինձ Ունիթորոնների
ժամանակից մնացած մի լատինական գրութիւն, որ նետա-
քրքիւ տեղեկութիւններ է պարունակում բորբորիտոնների
մասին. բայց զժառոգաբար այդ գրութեանը ի մօտոյ ուսում-
նասիրելու միջոց չեմ ունեցել:

* Տես Գիրք Գ. գլուխ Կ.

** Տես Ատտիկոսի նամակը, Սորենացի Գիրք Գ. գլ-
ծԶ, եւ գլ. ԺԹ:

քրիստոնեայ ժողովուրդ այնուհետև քաղաքակրթութեան ժառանգորդ մնացած արևմտեան քրիստոնեայ ազգերի հետ զուգընթաց առաջ շարժելու: Մինչև ի դար հայ դպրոցի մէջ գերակշռողը արևելեան տարրն էր՝ ասորականը, այդ ժամանակից ի վեր յունականը դարձաւ. անշուշտ այդ երկու ոգիների մէջ երկարատեւ յամառ կռիւ տեղի պիտի ունենար, որ և անմիջական կապ ունի մեր ի նկատի առած աղանդի պատմութեան հետ:

Այս կռուի մի թիւթեւ արձագանգն է անշուշտ որ մենք գտնում ենք Ղազար Փարպեցու նշանաւոր թղթի մէջ, իսկ այդ թուղթը բաւական նիւթ է տալիս մի քանի եզրակացութիւնների համար, որոնք շատ մեծ նշանակութիւն ունին նոյն ժամանակի պատմութիւնը պարզաբանելու գործում: * Ձուր տեղը չէ որ հին կարգով ասորական դպրոցում կրթութեամբ արեղաները արևմուտքից վերագարձող Խոսրովի հասցէին. «Ահա՛ ո՛ւր գայ միւս թարգմանն» թշնամայից խօսքերն էին ուղղում այդ Խոսրովին՝ գործունէութիւնը անդառնալի կերպով կործանել էր նոցա ազդեցութիւնը հայ ժողովրդի վերայ, կերպարանափոխ էր արել վերջինիս մտաւոր, հոգեկան աշխարհը: Ինքը Ղազար, որ իբրեւ ամենաջերմ յունասէրներից մէկը շատ հալածանք էր կրել հին դպրոցի աշակերտների կողմից, թուելով նոցա իւր դէմ գործածած զէնքերը՝ մէջ է բերում նաև մի աղանդի համառօտ նկարագիրը, և թէև նորա անունը տալ արժան չէ համարում, բայց յայտնի նշաններով ցոյց է տալիս, թէ մենք ում հետ գործ ունենք: Ղազարին հակառակորդները աղանդաւոր էին անուանել և նա հերքում է այդ մեղադրութիւնը այն հիման վերայ, որ ինքը քաջ ծանօթ է

աղանդաւորների դէմ ուղղած եկեղեցական նշանաւոր հայրերի զրուածքներին և նոցանից ուսած ճշմարիտ վարդապետութեան շնորհիւ ապահով ամեն տեսակ մոլորութիւններից: Այս աւելացնում է. «Եւ արդ թէպէտ և զըթեալ սոքա (յունական աշխարհի աղանդաւորները) անբժշկութեամբ կաղան ի հաւատն, այլ սակայն բանիւ և ոչ գործով՝ զի ըստ մարմնոյ պարկեշտութեան յամենայն ճշնութիւնս մի զմիով ելեւելս առնեն և մանաւանդ ի կերպուրս և ըմպելիս և ի գիշութեան ժուժկալութիւնս:—Իսկ հայոց աշխարհի աղանդ՝ զոր անն, անանուն է ըստ վարդապետի և անդիր ըստ բանի: Ի հաւատոյ և յուսմանէ տգէտք երևին և ի գործս ծոյլք և անժոյժք. յորոց՝ ըստ անգիտութեանն, որ է ի նոսա և ըստ անկարգ վարուց այդպիսի իսկ արդարեւ աղանդոց վայել էր բուսանել, ըստ յօդուածոյ առասպելաբանութեանն, թէ ըստ խոյլի հարսնացելոյ՝ կոյաջուր բաղանկը՝ բայց ես թէև զիտէի զոք յայնպիսեացն՝ ընդ լոյս դատել և կամ պարտաւորել ամենեւեմ ոչ կամէի. վասն որոյ կարծէին չարաթոյնքն, թէ և ես նմանիցիմ նոցա:»

Փարպեցու ժամանակ ուրեմն մի աղանդ կար տարածուած, որ նորա կարծիքով հայոց ժողովրդական կեանքի ծնունդ էր և համապատասխան այստեղ իշխող վարք ու բարքին, որի հետ գործ ունենալը մինչև իսկ անվայել էր նորա պէս հիւսնական կրթութիւն ստացած, զարգացած մարդու համար: Բայց իրան է արդեօք, որ այդ աղանդը հայոց աշխարհում է առաջ եկել և օտար երկրներում իւր նմանը չունէր:—Զորբորդ դարու նշանաւոր հայրերից մէկը Ս. Եպիփանիոս, որ մի շատ ընդարձակ զրուածք է թողել մինչև իւր ժամանակ յայտնուած 80 աղանդների դէմ, ներկայացնում է 80 լիք իբրեւ մի աղանդ, որ բոլորովին տարբեր բնաւորութիւն ունի քան թէ միւսները, որի «ոչ սկիզբը յայտնի է և ոչ ծայրը, ոչ զուիւր և ոչ արմատը» և որ ճիշդ Փարպեցու նկարագրին պէս ոչ մի որոշ անուն ունի և ոչ հաստատուն օրէնքներ: Այդ

* Այս նշանակութիւնը աշխատել եմ ես մի քանի խօսքով ցոյց տալ իմ գրքի մէջ, եր. 47 շ. Պրոֆեսոր Մարք, ինչպէս երևում է առանց ի նկատի ունենալու իմ ասածները, հետաքրքիր զուգահեշտութեամբ՝ մասնաւոր ուշադրութիւն է դարձնում նոյն խնդրի վերայ իւր նորերս հրատարակած մի քրոշիկի մէջ—0 началомъ Исторіи Арменіи Анонима եր. 297 շ. որ արտատպած է Византійскій Временикъ. 1894, II. Թերթից:

Միսսագեաններին աղանդն է, որ չորրորդ դարում յառաջ եկաւ Միջագետքում և շուտով տարածուեց Ասորիքի և Հայաստանի վերայով մինչև հիւսիսային երկիրներ: Թէ նոքա Հայաստանում գործունէութիւն են ցոյց տրուել՝ այդ յայտնի է, և եթէ մենք ուրիշ վիճարկութիւններ ևս չունենայինք, այնուամենայնիւ հեշտութեամբ կարելի էր ենթադրել, թէ Փարպեցու խօսքը այս աղանդաւորների մասին է: Բայց մենք ունենք վիճարկութիւնների որոնց նշանակութիւնը պարզ չէ եղել մինչև այժմ միայն մի թեթեւ թիւրմացութեան չնորհիւ:

Վարդանանց պատերազմից մի քանի տարի առաջ կայացած Շահապիվանի եկեղեցական ժողովը, որի նպատակն էր առաջն առնել Ս. Սահակի և Մեսրոպի մահից յետոյ եկեղեցու մէջ մուտ գտած անկարգութիւնների, իւր կանոններից 19 բղբ և 20 բղբ ուղղում է մի ինչ որ *Յիշատակ* հետեւողների դէմ և նոցա համար ամենախիստ պատիժներն է որոշում: *Յիշատակ* բառը Միսիթարեանների բառարանում «պիղծ, պղծադործ աղանդաւոր» է թարգմանած, բայց բառական է նորա մօտ դնել ասորական *ܡܝܬܐ ܕܡܝܬܐ* անունը, որ *Միտադիտակ* նախնական ձևն է և «աղօթողներ» է նշանակում, որպէս զի մենք հեշտութեամբ նկատենք այդ երկու բառերի նոյնութիւնը, տարբեր տառադարձութեամբ՝ տարբեր լեզուների մէջ: Միջոցութիւնը ուրեմն ուրիշ ոչինչ է, եթէ ոչ եկեղեցական պատմութիւնից յայտնի մի նշանաւոր աղանդ, որի իսկական բնաւորութիւնը թէև դեռ չէ որոշուած, բայց ինչպէս շատ նշաններից երևում է աչքի ընկնող դեր է խաղացել զանազան քրիստոնեայ ազգերի և մասնաւորապէս մեր ժողովուրդի կեանքի մէջ:

Պատմագետների կարծիքով այս աղանդը, ինչպէս և մի քանի ուրիշ նման աղանդների կապ ունի չորրորդ դարում մեծ ծաւալ ընդունած կրօնաւորական կեանքի հետ և նորա մի ծայրահեղ երեւոյթն է ներկայացնում: Բայց ըստ իս այդ կարծիքն անհիմն է: Արդարեւ

Միջոցութիւնը շատ անգամ ընդունելութիւն է գտել վանքերում և կրօնաւորական զգեստի տակ թաղնուած՝ կարողացել է աւելի ազդեցութիւն ունենալ ժողովրդի վերայ, բայց նա առաջնորդութեամբ կրօնաւորութեան բոլորովին հակառակ սկզբունքներով ևս ինչպէս Շահապիվանի կանոններից պարզ երևում է, իւր մէջ ընդունում էր ոչ միայն հոգեւորականների, այլ ամեն սեռի, հասակի և դասակարգի պատկանող մարդիկ: Եպիփանիոս քրիստոնեայ Միսսագիանների տարբերում է համանուն հեթանոս աղանդաւորներից և պնդում է, թէ նոքա ոչ մի կապ չունէին իրար հետ. բայց ընդհակառակը, հէնց միայն նոցա, միեւնոյն անունն ունենալուց՝ աւելի հաւանական է եղրակացներ, թէ նոցա ծագումն էլ միեւնոյնն է, նոյն հեթանոսական արմատից: Գոնէ մեզ ծանօթ քրիստոնեայ Միսսագեանները միայն անունով են քրիստոնեայ, իսկ իրենց բարքով և սովորութիւններով աւելի հեշտութեամբ կարող են համեմատուել մահմետական գերվիշների հետ: Այստեղ թէ այնտեղ հաւանականաբար նոյն արեւելեան ժողովուրդների յատուկ զգացումներ և ձգտումներ մի նոր կրօնական շարժման ազդեցութեան տակ նոյնօրինակ երեւոյթ են արտադրել: Արհամարհանք դէպի ամեն տեսակ հասարակական կարգեր և արտաքին արարողութիւնների, մանաւանդ դէպի ձեռքով աշխատանքը՝ Միսսագեանների զխառնոր յատկանիշն է:

Այլ և կին միասին խումբերով նոքա ման էին զալիս և ողորմութիւն էին հաւաքում մկրտութիւն, հաղորդութիւն և այլ եկեղեցական կարգեր աւելորդ էին համարում և մշտական աղօթքներով աշխատում էին արտաքսել իրենց կարծիքով ամեն մարդու մէջ ի ծնէ բնակուող՝ չար դէին: Միւստիքական պարով նոքա յափշտակութեան մէջ էին ընկնում և այդպէս ձգտում էին այս աշխարհից կարուած ցնորքների զրկում երջանիկ ժամեր դնել: Այսպիսի մի կեանք, բնական է որ շատ շուտով ամեն տեսակ անբարոյական ախտեր արտադրէր և հաւանականօրէն այդ է պատճառը, որ նո-

ցա մասին այնպէս զգուանքով և սոսկումով են խօսում:

Եթէ որ ի մծղնէութեան գտցի (ասում է Շահապիւփանի 19րդ. կանոնը) կամ երէց սարկաւազ կամ ի հարեղայից՝ քահանայութիւնն լուծցի, աղուեսագրուած ի ճակատն դիցէ, և ի տեղի մի ձգնաւորաց յապաշխարութեան տացեն: Ապա թէ դարձեալ ի նոյն գտցի, զժողոսն կըտրեսցեն՝ զերկոսեան և ի զողինոցն տացեն: Սոյնպիսի խիստ պատիժներ որոշում է յաջորդ կանոնը նաև աշխարհականների համար. «Կամ իշխան որ կամ ընտանիք նորին գտցին ի մծղնէութեան, նոյնպէս նզովեալ եղիցին և ի հրապարակ մի իշխեսցեն զալ...» * Ինչքան մեծ էր խստութիւնը մծղնէութեան դէմ, այնքան էլ մեծ պէտք է եղած լինի սորա հրապոյրը ժողովրդի համար, որ այսպէս քահանայ ու իշխան, ամենքին իւր կողմն էր զրաւում: Արօնաւորութեան պահանջած ձգնական կեանքը այս հրապոյրը չունէր. մինչդեռ զաղտնի անբարոյականութեան, օրինազանցութեան, միւստիքական սովորութիւնների ու նախապաշարութիւնների՝ ազէտ և մեղկ ամբոխի վերայ ազդեցութիւն անելը դիւրաւ հասկանալի է: Զրգերը կտրելու պատիժը հաւանականաբար նորա համար էր, որ աղանդաւորներին արգելուի իրենց խորհրդաւոր պարը շարունակելու:

Եթէ ի նկատի ունենանք, որ Շահապիւփանի ժողովը գումարողները Ս. Սահակի և Մեսրոպի աշակերտներն էին և որ նոցանից առաջ եկեղեցին օտարի ձեռքով էր կառավարուում, որոշ ազգային կերպարանք դեռ չէր ստացել, հասկանալի կլինի, թէ ինչու այս աղանդի վերայ ևս նոքա առաջին անգամ ուշադրութիւն դարձրին: Մինչև Ե. դար մեր ժողովուրդը ինքնուրոյն կրթութիւն չունենալով՝ չէր կարող դեռ որոշել թէ որն է հարադատը, որը խորթ, որը ծննդաբաժնի քրիստոնէականը և որը քրիստոնէութեան անուան

տակ ծածկուած մոլորութիւն. և ասորի քարոզիչները, որ հաւանականաբար մեծ մասամբ տգէտ էին և անուպայ վարքի տէր՝ դուցէ իրենք նոյն իսկ արծարծել և քաջալերել էին այսպիսի աղանդներ, ինչպէս էր Մծղնէութիւնը, ինչպէս վերև յիշուած հեթանոսական մնացորդները: Սահակ և Մեսրոպ և նոցա աշակերտները որոշ կարգեր ու կանոններ սահմանելով՝ կռիւ սկսեցին բոլոր այն տարրերի դէմ, որ խորթ էին և օտարամուտ և այդ կռիւը նոցա մահով չվերջացաւ. Արօնական պատերազմները առ ժամանակ զբաղեցնում էին ամենքի ուշադրութիւնը այնպիսի մեծ և կարեւոր խնդիրներով, որ աղանդների հետ զբաղուելու միջոց չկար. իսկ երբ պատերազմը վերջացաւ, այդ աղանդները, ինչպէս Փարպեցու զրութիւնից տեսնում ենք, կրկին զլուխ բարձրացրին և հաւանականօրէն իրար խառնուելով մծղնէութեան թաւի տակ՝ դեռ դարեր շարունակ զոյութիւն ունեցան և պատմութեան մէջ մի քանի անգամ էլ ի երևան եկան նորա-նոր անուններով:

Կ. Ա.



ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՔՐՈՆԻԿՈՆ

ԿԱԹՈՒԼԻԿ ԵԿԵՂԵՑԻ

1. ՄԻ ՆՈՐ ՀՈԳԵՒՈՐ ԴՊՐՈՑ Կ. ՊՈԼՍՈՒՄ՝

Անցած տարւան վերջին օրերում լրագիրները հաղորդեցին Հռոմից, որ պապը վճռել է մի նոր հոգևոր դպրոց բանալ Կ. Պոլսում արեւելեան քրիստոնէաների համար:

Այս վճիռն համարուում է հետևանք վատիկանի վերջին անյաջող միութեան ժողովի: Ինչպէս երևում է, պապական գահի նեցուկ յիսուսեանները, որոնց գործն էր և վերջին ժողովը, վճռել են իրենց բոլոր ոյժը գործ դնել արեւելքում պապի իշխանութիւնը ընդարձակելու: Անհայրենիք յիսուսեանները, որոնց առաջև փակուած են բոլոր եւրոպական երկիրները, վերջին ժամանակներս իրենց գործունէութեան ասպարէզ են ընտրել Տաճկաստանը, մանաւանդ Փոքր Ասիան և Հայաստանը:

* Այս կանոնները մէջ են քերուած մասամբ Զաւէնանի հայոց պատմութեան մէջ եւ ասելի ընդարձակ, քայքայ նոյնպէս թերի կերպով Աբէլ Արքեպիսկոպոսի Պատմութիւն ժողովոց Հայաստանեայց եկեղեցւոյ, զընում: